

Ռ. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԱՄՔԻ ՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏ
ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հայերենի ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների ուսումնասիրության ժամանակ քիչ ուշադրություն է դարձվում այն երանգներին, որ կարող են ունենալ այդ նախադասությունները՝ կախված գլխավոր նախադասության խնդրառու բայի իմաստից։ Եթե գլխավոր նախադասության խնդրառու բայի սեռով, նրա ներգործող հատկանիշով որոշվում է անմիջականորեն հենց այդ ներգործության ոլորտում ընկած և նրա օբյեկտը հանդիսացող երկրորդական նախադասության բնույթը որպես ուղիղ խնդիր, ապա նույն խնդրառու բայի իմաստը այդ ուղիղ խնդիր երկրորդական նախադասությանը հաղորդում է յուրահատուկ երանգ և ցույց է տալիս, թե երկրորդական նախադասությամբ արտահայտվածը ինչի՞ օբյեկտ է հանդիսանում։

Ինչպես հայտնի է, շնայած այն բազմաթիվ ու բազմապիսի իմաստային տարբերություններին, որ գոյություն ունեն ներգործական սեռի բայերի միջև, այդ բայերը ըստ իրենց արտահայտած իմաստների էական և ընդհանուր կողմերի կարելի է միավորել համեմատաբար սահմանափակ խմբերի մեջ, ինչպես՝ ասացական բայեր, զգայական ընկալման նշանակություն ունեցող բայեր, մտածական բայեր, կամական բայեր, իմացական բայեր և այլն։ Ուստի ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները կարող են լինել իմացության օբյեկտ, խոսքի օբյեկտ, զգայական ընկալման օբյեկտ, կամքի ու ցանկության օբյեկտ և այլն՝ կախված գլխավոր նախադասության այն խնդրառու բառի բայիմաստից, որին անմիջականորեն վերաբերում են նրանք։

Սույն հոդվածում քննության են առնվում այն ուղիղ խնդիր
երկրորդական նախադասությունները, որոնց համար որպես խընդ-
րառու գլխավոր նախադասության մեջ հանդես է գալիս որևէ կա-
մական բայ:

Կամական բայերը արտահայտում են կամքի ու ցանկության
գաղափար:

Սակայն, ինչպես հայտնի է, գործող անձի կամքը կարող է
դրսևորվել այլ և այլ ձևերով. այն կարող է արտահայտվել խընդ-
րանքի ձևով (խնդրել, աղաչել, աղերսել և այլն), հորդորի, կար-
գադրության ու հրամանի ձևով (հրամայել, կարգադրել և այլն),
սովորական ցանկության ձևով (ցանկանալ, ուզենալ և այլն):

Բայց այդ բոլոր բայերին բնորոշ է այն հանգամանքը, որ
ներանք արտահայտում են կամք կամ ցանկություն և սովորաբար
հանդես են գալիս նպատակի երանգով: Ուստի այդ բոլոր բայերը
ըստ իրենց իմաստային էական հատկանիշների խմբավորվում են
կամական բայերի խմբի մեջ՝ անկախ այն հանգամանքից, թե
ներանցով արտահայտված կամքը ի՞նչ ձևով է դրսևորվում (խընդ-
րանք, ցանկություն, կարգադրություն), մանավանդ, որ այդ բոլոր
բայերը երկրորդական նախադասությունների կառուցվածքի վրա
ազդում են միևնույն ուղղությամբ:

Հին հայերենում գործածական են եղել մի շարք կամական
բայեր, որոնց մեծ մասը նույնությամբ կամ աննշան փոփոխու-
թյուններով անցել է ժամանակակից հայերենին, ինչպես՝ կամիմ,
ցանկամ կամ ցանկանամ, խնդրեմ¹, աղաչեմ, աղերսեմ, թախան-
ձեմ, աղօթեմ², հայցեմ, հրամայեմ (նաև հարադիր կազմությամբ՝
հրաման տամ), յորդորեմ, ստիպեմ և այլն: Ուշ շրջանի գրաբա-
րում որպես կամական բայ գործածվել է նաև ժողովրդական լեզվից
փոխառյալ ուզել բայը, որը չի հանդիպում դասական մատենա-
գրության մեջ:

Կամական բայերի խմբավորումը և նրանց առանձնացումը բա-
յերի մյուս խմբերից (իմացական, ասացական և այլն) ինքնա-
նպատակ չէ: Այդ խմբավորումը խոշոր նշանակություն ունի ուղիղ
խնդիր երկրորդական նախադասությունների կառուցվածքի ուսում-
նասիրության համար: Գլխավոր նախադասության՝ կամական բա-
յով արտահայտված ստորոգյալի անմիջական օբյեկտը հանդիսա-

¹ Գրաբարում խնդրել բայը ունի նաև փնտրելու, որոնելու նշանակություն,
որպիսի իմաստով կամական չէ:

² Աղօթեմ բայը գրաբարում նշանակում է նաև խնդրել, աղաչել, որպիսի
իմաստով կամական է:

ցող երկրորդական նախադասութիւնները մենք անվանում ենք կամքի ու ցանկութեան օբյեկտ երկրորդական նախադասութիւններ՝ ի տարբերութիւն իմացութեան, զգայական ընկալման և խոսքի օբյեկտ երկրորդական նախադասութիւնների:

Կամքի ու ցանկութեան օբյեկտ երկրորդական նախադասութիւնները մյուս կարգի ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւններից տարբերվում են կառուցվածքային մի շարք գծերով, որոնց ուսումնասիրութեանն էլ անցնում ենք: Ամենից առաջ անհրաժեշտ է կանգ առնել քերականական այն միջոցների վրա, որոնցով իրականացվում է հիշյալ նախադասութիւնների ստորադասումը բարդ ստորադասական նախադասութեան գլխավոր մասին:

Կամքի ու ցանկութեան օբյեկտ երկրորդական նախադասութիւնները հին հայերենում գլխավոր նախադասութեանը ստորադասվում են ստորադասական շաղկապների միջոցով. այդ նշանակում է, որ նրանք մտնում են շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնների ավելի ընդարձակ խմբի մեջ, մի խումբ, որը իր էական առանձնահատկութիւններով տարբերվում է ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնների մյուս խմբից՝ գլխավոր նախադասութեանը հարաբերական բառերով կապակցվող երկրորդական նախադասութիւնների խմբից¹:

Սակայն կամքի ու ցանկութեան օբյեկտ երկրորդական նախադասութիւնները մյուս կարգի շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւններից տարբերվում են կառուցվածքային մի բնորոշ առանձնահատկությամբ. կամքի ու ցանկութեան օբյեկտ երկրորդական նախադասութիւնները բարդ ստորադասական նախադասութեան գլխավոր մասում սովորաբար շին կարող ունենալ որպես հարաբերյալ² հանդես եկող որևէ ցուցական դերանուն, մինչդեռ մնացած շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւններին հաճախ բարդ նախադասութեան գլխավոր մասում համապատասխանում է որպես հարաբերյալ հանդես եկող որևէ

¹ Գլխավոր նախադասութեան հետ հարաբերական բառերով կապակցվող ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնների և նրանց՝ շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւններից ունեցած տարբերութիւնների մասին մանրամասն խոսվում է դիսերտացիոն աշխատանքի համապատասխան բաժնում:

² Այստեղ և ստորև պայմանականորեն գործածում ենք «հարաբերյալ» տերմինը՝ զրական ճանաչում գտած համապատասխան տերմինի բացակայութեան պատճառով: «Հարաբերյալ» ասելով այստեղ ի նկատի ունենք գլխավոր նախադասութեան մեջ, ցուցական դերանվամբ արտահայտված ուղիղ խնդրի ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) գործածութիւնը, որը բուրրովին չի նույնեղում սովորական հարաբերյալի հետ:

ցուցական գերանուն, որի կոնկրետ նյութական բովանդակությունը բացահայտվում է հենց այդ երկրորդական նախադասությամբ. օրինակ՝ «Նա զայն ևս քաջապես տեսանէր, զի դեռևս շողայր սուրն ի վերայ պարանոցի երանելեացն» (Ծղիշէ, 178): «Բայց զայս գիտասցիք, զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ» (Ղուկ., Ժ, 11): «Եւ զայն ևս գիտել ետ մեզ, թէ որոց նա կամի՝ յաղթականք կարեմք լինել» (Ծզն., ԵԱ, 2-րդ, ԺԱ, 103):

Կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասությունները բարդ նախադասության գլխավոր մասում այդպիսի հարաբերյալներ ունենալու դեպքում տեղիք կտային որոշ երկրմաստություն, որը նրանց կղղկեր ուղիղ խնդրի երկրորդական նախադասության իրենց շարահյուսական ֆունկցիայից և կվերածեր նպատակի պարագա երկրորդական նախադասության: Կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասություններ ունեցող բարդ ստորադասական նախադասությունների բնորոշ կառուցվածքային առանձնահատկություններից մեկն էլ գլխավոր մասի ներգործական բայի մոտ ուղիղ խնդրի բացակայությունն է, որը լրացվում է երկրորդական նախադասությամբ. օրինակ՝ «Եւ զայս հրովարտակ մեր առ ձեզ գրեցաք, զի... մեզ զԳրիգորդ տեսուչ և վարդապետ առաջնորդութեան աստուածազնաց ճանապարհացն, և հովիւ և բժիշկ կացուսչիք» (Ագաթ., ՃԺԴ, պար. 801):

Բերված օրինակում երկրորդական նախադասությունը նպատակի պարագա է, քանի որ գլխավոր նախադասության մեջ ներգործական սեռի բայի մոտ արդեն իսկ առկա է նրա ուղիղ խնդիրը (զայս հրովարտակ): Եթե գլխավոր նախադասության մեջ չլիներ այդ ուղիղ խնդիրը, ապա գլխավոր նախադասությունը կմնար թերի, և երկրորդական նախադասությունը կգիտակցվեր որպես ուղիղ խնդրից զուրկ գրել բայի անմիջական ծավալուն օբյեկտը և կդառնար կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասություն. օրինակ՝ Եւ... առ ձեզ գրեցաք, զի... մեզ զԳրիգորդ տեսուչ և վարդապետ առաջնորդութեան աստուածազնաց ճանապարհացն. և ճովիւ և բժիշկ կացուսչիք:

Նույն ձևով գլխավոր նախադասության մեջ ուղիղ խնդրի հոլովով (հայցական) ցուցական դերանունը կարող է չգիտակցվել որպես հարաբերյալ, իսկ այդ դեպքում կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասությունը կդիտվի որպես նպատակի պարագա երկրորդական նախադասություն:

Ստորև բերվող օրինակների համեմատությունը ցույց է տալիս, թե ինչպիսի երկրմաստության առիթ կարող է դառնալ գլխավոր

նախադասութեան մեջ հայցական հոլովով ցուցական դերանվան առկայութիւնը:

«... ապա խնդրեաց Շաղիտայ յԱստուծոյ, զի մի՛ տք ըմբռնեսցէ զմարմինն նորա» (Բուդ., 5-րդ, 12, 186): «... Ապա խնդրեաց Շաղիտայ յԱստուծոյ զայն. զի մի՛ տք ըմբռնեսցէ զմարմինն նորա»:

Առաջին օրինակում երկրորդական նախադասութիւնը լրացնում է գլխավոր նախադասութեան թերին՝ որպէս ուղիղ խնդիր անմիջականորեն վերաբերելով նրա ներգործական սեռի բային, մինչդեռ նույն նախադասութեան մեջ զայն դերանվան ավելացումը պատճառ է դառնում երկրորդական, քանի որ այն կարող է գիտակցվել ոչ որպէս հարաբերյալ, այլ որպէս ինքնուրույն ուղիղ խնդիր, իսկ այդ դեպքում երկրորդական նախադասութիւնը կդառնա նպատակի պարագա, որը կբացահայտի գլխավոր նախադասութեան գործողութեան և ուղիղ խնդրի փոխհարաբերութեան նպատակը:

Կամքի ու ցանկութեան օբյեկտ երկրորդական նախադասութիւնները հին հայերէնում բարդ ստորադասական նախադասութեան գլխավոր մասին սովորաբար ստորադասվում են զի շաղկապով. օրինակ՝

«Կամեցաք՝ զի որք ընդ մերով թագավորութեամբ իցեն՝ առանց խռովութեան լիցին» (Բ. Մակար., ԺԱ, 23): «Ոչ յադի շարխրատտութ, այլ կամի, զի քան զինքն շարագոյնս արասցէ» (Եղիշէ, 37): «Կամիմ զի այժմ տացես ինձ վաղվաղակի ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի» (Մարկ., 2, 25): «Եւ խնդրեսցուք ի Քրիստոսէ տեառնէ մերմէ, զի թողցէ զմեզս անհաւատութեան հերձուածոնդութեան, և ողորմի» (Բուդ., 4-րդ դպր., Ե, 69):

Սակայն հին հայերէնում կամքի ու ցանկութեան օբյեկտ երկրորդական նախադասութիւնները կարող են գլխավորին ստորադասվել քէ, եքէ շաղկապների միջոցով զի-ի փոխարեն: Դա լինում է սովորաբար հետևյալ դեպքերում.

ա) Երբ գլխավոր նախադասութեան յայ-ստորոգյալը, որին անմիջականորեն որպէս օբյեկտ վերաբերում է նկարագրվող տիպի երկրորդական նախադասութիւնը, դրված է ժխտական ձևով: Իմաստային տեսակետից այս սիպի բարդ ստորադասական նախադասութիւնների բնորոշ կողմն այն է, որ երկրորդական նախադասութեամբ հաղորդվածը ցանկալի չէ գլխավորի ենթակայի համար: Օրինակ՝

«... Ոչ կամի (տէր) եթե տք կորիցէ, այլ զամենեցուն հասանել յապաշխարութիւն» (Բ. Պետ., Գ, 9): «Եւ անտի եյեալ անցա-

նէին առ գալիւնացւոյք, և ոչ կամէր (Յիսուս) եթէ ոք գիտասցէ» (Մարկ., Թ, 29)։ «...Աստուած՝ որ աննախանձն արար զնոսա (զմարդիկ) անձնիշխանս ոչ կամէր թէ որպէս զանասունս ի հարկէ վարիցին» (Եզն., ԵԱ, 1-ին, ԺԹ)։ «Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք, եղբարք» (Ա. Կորնթ., Ժ, 1)։

Պետք է նշել, որ դասական հայերենում ոչ միայն կամքի ու ցանկութեան օրյեկտ երկրորդական նախադասութիւնները, այլև առհասարակ ժխտական նախադասութեանն ստորադասվող երկրորդական նախադասութիւնները սովորաբար գլխավորի հետ շաղկապվում են թէ, եթէ—ով զի-ի փոխարեն։

Այդ առթիւ Թ. Թոռնյանը դրում է. «Բացասական և հարցական խոսքին հետևող նախադասութեան սկիզբը եթէ, թէ կդրվի զի-ի տեղ»¹։

Բ) Եթե երկրորդական նախադասութեամբ հաղորդվածը ցանկալի է գլխավոր մասի ենթակայի համար, բայց ցանկալին ոչ այլ ինչ է, եթե ոչ իրականում տեղի ունեցածի բացասումը, ժխտումը։ Կառուցվածքային տեսակետից այս տիպի բարդ ստորադասական նախադասութիւններին բնորոշ է այն հանգամանքը, որ նրանց գլխավոր մասի ստորոգյալը արտահայտված է լինում հաստատական խոնարհման բայով, իսկ երկրորդական մասի ստորոգյալը միշտ, ժխտական է լինում և դրվում է այնպիսի ժամանակով, որով հնարավոր է հաղորդել ստորադասական եղանակի անցյալի ապառնու իմաստ։ Օրինակ՝ «Կամէր (Աստուած) թէ չէր յանցուցեալ Ադամայ» (Եզն., ԵԱ, Բ, ԺԶ, էջ 114)։

Գ) Երբեմն թէ կամ եթէ է դրվում նաև այն դեպքերում, երբ գերադաս նախադասութեանը ստորադաս է մի այլ նախադասութեան կամ քննարկվող տիպի երկրորդական նախադասութեանը ծառայում է որպէս գերադաս մի այլ նախադասութեան համար. օրինակ՝

«Զամենայն զոր միանգամ կամիչիք թէ արասցեն ձեզ մարդիկ այնպէս և դուք արարէք նոցա» (Մատթ., է, 12)։ «Կամիմ թէ գիտիցէք, եղբարք, զի որ ինչ վասն իմ էր, ևս քան զևս ի յառաջագի մութիւն աւետարանին եկն» (Փիլիպ., Ա, 12)։

Վերջին նախադասութեան մեջ ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ բարդ ստորադասական նախադասութեան մասերի՝ թէ շաղկապով կապակցվելու գործում նշված հանգամանքից բացի, ըստ երևութիւն, որոշ դեր է կատարել նաև այսպէս կոչված պեսպիսութիւնը. քանի որ միևնույն բարդ ստորադասական նախադաս-

¹ Թ. Թոռնյան, Հասարակի բնութեան, Վիեննա, 1886 թ., Զ, 13, Ժառթ. 8, էջ 419.

սության ներսում երկու ստորադասություններից մեկը իրականաց-
ված է զի շաղկապով, ապա ոճը ընտիր դարձնելու և կրկնությունից
խուսափելու նպատակով մյուս ստորադասությունը կատարվում է
յե շաղկապի միջոցով:

Ժամանակակից հայերենում ուսումնասիրվող ուղիղ խնդիր
երկրորդական նախադասությունները գլխավորին ստորադասվում
են ու շաղկապով. օրինակ՝

«Ուրեմն, պարոն Շահյանը, Աշխենը և ես, — երեք հոգի, ցան-
կանում ենք, որ ես արտասանեմ Ռուզանի մենախոսությունը»
(Նար-Դոս, 6, 57): «Ես չեմ կամենում, որ դու հայրենասիրությամբ
գերազանցես ինձ» (Մուրացան, Գևորգ Մարգարետունի, 135): «Նա
(Զանոն) մտքում աղերսում էր, որ երկար տեւեր այդ պահը» (Ան.
Սեկոյան, ՈՎՄ., 567):

Սակայն ժամանակակից հայերենում մասամբ նպատակի պա-
րագա երկրորդական նախադասությունների անալոգիայով, մա-
սամբ էլ ռուսաց լեզվի ազդեցությամբ այս կարգի նախադասու-
թյուններում ու շաղկապին զուգահեռ տարածում է գտնում նաև
որպեսզի շաղկապի գործածությունը. օրինակ՝ «Ես առաջարկում
եմ, որպեսզի մեր կոմերիտականները իրենց ձեռքը վերցնեն նոր
սարքավորումների տեղադրումը. նորն ու առաջավորը արմատա-
վորելու գործը» («Ավանգարդ», 10 սեպտ., 1959, էջ 1):

Կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասու-
թյունների կառուցվածքային բնորոշ առանձնահատկություններից
մեկն էլ այն է, որ այդ նախադասությունների բայական ստորո-
վյալը, իսկ երբ ստորոգյալը անվանական է, նրա բայական հան-
դույցը սովորաբար դրվում են երկրորդ ապառնիով¹. օրինակ՝

«Եւ կինն էր հեթանոս, փինիկ Ասորի յազգէ. և աղաչէր զնա
դի զդեւն ճանցէ ի դստերէ նորա» (Մարկ., է, 26): «... Եւ աղա-
չեաց զվերականցուս իւրոյ մահուանն, զի թողացուցեն նմա սա-
կավ մի կալ յաղօթս» (Բուզ., 4-րդ, ՄՁ, 148): «Եւ էր անդ երամակ
մի խոզից բազմաց արօտական ի լերինն, և աղաչեցին (դեւք) զնա
(զՅիսուս) զի նրաման տացէ նոցա մտանել ի նոսա» (Ղուկ., Ը,
32): «Իսկ Հրեայքն... աղաչեցին զՊիղատոս զի խորտակեցեն
զբարձս նոցա և բարձցին» (Յովհ., ԺԹ, 31):

Սակայն դասական հայերենում լինում են դեպքեր, երբ քննարկ-

¹ Եթե անվանական ստորոգյալի բայական հանդույցը հանդիսանում է եւ
օժանդակ բայը, ապա այն միշտ դրվում է առաջին ապառնիով: Մանրամասն տե՛ս
ստորև:

վող նախադասութիւնների ստորոգյալները դրված են լինում
բայի ստորադասական եղանակի առաջին ապառնիով. օրինակ՝

«Եւ որպէս յառաջագոյն ասացաք, իւր (աստուծոյ) կամքն միշտ
բարեախորժք, և կամի՝ զի և իւր բանաւոր արարածքն ցանկացողք
արեաց և դորժանայ արդարութեան լինիցին» (Եղն. ԵԱ, 2-րդ,
Ժէ, 119): «Եւ հարիւրապետն բանգի կսմեցաւ ապրիցուցանել
զՊաղոս՝ արգել զնոսա ի խորհրդոյն. հրամայեաց զի որ կարողն
իցեն լուղել՝ անկանիցին նախ և ի ցամաքն ելանիցեն» (Գործ.,
Իէ, 43): «Արդ՝ մատուցեալ (Տրդատայ) աղաչէր զսուրբն Գրիգո-
րիոս, զի դոնեա ձեռացն և ստիցն հնար լինիցի՝ յժշկութեան...»
(Ագաթ., ՊԶ, ԺԵ, պար. 763): «Կարող էր (Աստուած) ևս վաղ յառա-
ջին յաւիտեանսն առնել զաշխարհ, այլ այնպէս կամեցաւ՝ զի ոչ կա-
քի վաղ առնիցէ, և ոչ յոյժ անագան, այլ յորժամ դէպ և պատշաճ
իցէ» (Եղն., ԵԱ, 3-րդ, ԺԶ, 162):

Հանդիպում են նաև այնպիսի վկայութիւններ, որտեղ միևնույն
ցանկութեան օբյեկտ երկրորդական նախադասութեան բազմակի
ստորոգյալներից մեկը դրված է լինում առաջին, իսկ մյուսը՝ երկ-
րորդ ապառնիով. օրինակ՝ «Արդ վասն այնորիկ գրեցի ես առ քեզ՝
աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես առ իս և բժշկեսցես
զհիվանդութիւնս զոր ունիմ ես» (Խոր., ՊԶ, 2-րդ, ԼԱ, 149):

Հետևյալ օրինակները պարզ կերպով վկայում են այն մասին,
որ միևնույն բայով արտահայտված ստորոգյալը նույն տիպի նա-
խադասութիւններից մեկում կարող է դրվել առաջին, իսկ մյուսում՝
երկրորդ ապառնիով. «... Եւ աղաչէին զնա զի գոնէ ի քղանցս հան-
դերձից նորա մերձենայցեն» (Մարկ., Զ, 56): «... Եւ աղաչէին զնա
(զՅիսուս) զի մերձեսցի ի նա (ի կոյրն)» (Մարկ., Ը, 22):

Երբ կամքի ու ցանկութեան օբյեկտ երկրորդական նախադա-
սութեան ստորոգյալը արտահայտված է եմ բայով, կամ երբ այդ
ստորոգյալը անվանական է, որի բայական հանգույցն է հանդիսա-
նում եմ օժանդակ բայը, ապա նա միշտ դրված է լինում առաջին
ապառնիով¹, քանի որ դասական հայերենը եմ բայի համար երկ-
րորդ ապառնու հատուկ ձև չունի. օրինակ՝

«Հայր, զորս ետուրն ինձ, կամիմ զի ուր եսն եմ, և նոքա իցեն
ընդ իս, զի տեսանիցեն զփառսն զիմ զոր ետուրն ցիս» (Յովհ.
Ժէ, 24),

¹ Որոշ ձևագրերում և ձառընտիրներում՝ երկրորդ ապառնի-լիցի:

² Նույն ձևով առաջին ապառնի է գործածվում քննարկվող տիպի առաջին
նախադասութիւններում, որոնց ստորոգյալները արտահայտված են երկրորդ
ապառնի մասնական համար հատուկ ձև չունեցող պակասավոր բայերով:

«Ոչ կամիմ եթէ տգէտի իցէմ. եղբարք... (Հուլմ., Ա, 13):

Բայերի եղանակների ու ժամանակների գործածության տեսակետից ուսումնասիրվող նախադասություններին բնորոշ է նաև այն հանգամանքը, որ քանի որ հին հայերենը շունի ստորադասական եղանակի անցյալ ժամանակ (1-ին և 2-րդ ապառնիների անցյալ), ուստի այդ նախադասություններում ստորադասական եղանակի անցյալի ապառնու իմաստը հաղորդելու համար դասական մատենագիրները գործ են ածում կամ սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակը, կամ էլ որևէ բաղադրյալ ժամանակի անցյալը. օրինակ՝

«Քանի լի կամիմ եթէ ամենայն մարդ լինէր իբրև ղիս. (Ա. Կորնթ., է, 7): «Կամէր (Աստուած) թէ չէր յանցուցեալ Ադամայ» (Եղն. ԵԱ, 2-րդ, ԺԶ, 114):

Արդի հայերենում ուսումնասիրվող ուղիղ խնդրի երկրորդական նախադասությունների ստորոգյալները դրվում են ըղձական եղանակով (ապառնի և անցյալի ապառնի). օրինակ՝ «—Ուղարկել է ինձ Վլադիմիր իշխանն Ու մայր տիկինը՝ Ապրակիտիան իր հետ խնդրում են, որ զաս ուրախ հարգի՞նքի...» (Հովհ. Թումանյան, 2, 231): «Երևի դու կամենում ես, որ ես իմ ցանկությունները դեռ քեզանից չսած քուն մտնեմ...» (Մուրացան, Գևորգ Մարզպետունի, 33): «Ցանկանում եմ, որ մեզ նամակի կառատ չքողեն» (Նար-Դոս, 6, 138):

Ժխտական բնույթի կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասությունների կառուցվածքը դասական հայերենում բնորոշ է նրանով, որ նրանք կազմվում են մի արգելական մակբայի միջոցով, որը դրվում է ստորադասական եղանակի երկրորդ, երբեմն նաև առաջին ապառնու հետ և արտահայտում է ժամանակակից հայերենի ժխտական ըղձականի իմաստը. «... Պետք է տարբերել մի՛ և ոչ մակբայների առանձին նշանակությունները: Մի մակբայը բային տալիս է աշխարհաբարի ժխտական ըղձականի իմաստը, իսկ ոչ-ը՝ ավելի հարկադրական իմաստ: Մի խաբեսցեն. թող չխաբեն. Զի ոչ երթիցեն. որովհետև չպիտի գնան. Զի մի երթիցեն. որպեսզի չգնան»¹:

Ստորև բերվող օրինակները պարզ կերպով ցույց են տալիս այդպիսի նախադասությունների կառուցվածքը.

«Բայց կամիս՝ զի մի՛ դառաբկասցի գործ իմաստութեան» (Իմաստ., ԺԴ, 5): «Արդ կամի՛ զի ամենեքեան որ հաւատան յորդի, մի՛ կորիցեն. այլ զի յարիցեն յաւուրն յարութեան» (Եղն., ԵԱ,

¹ Դոցենտ Վ. Առաքելյան, Գրարարի հատման, 1946, էջ 10, բ, 1, Ժանոթ, 17.

2-րդ, ԺԷ, 119), «Եւ յաւել ևս խօսել (Եսթեր) ընդ արքայի, և ան կաւ առաջին ոտից նորա, և աղաչէր՝ զի մի՛ մինչև ի վախճան լիցի պատուհասն ի վերայ Հրէիցն...» (Եսթեր, Ը, 3), «Աղաչեմ զի մի՛ ի մօտոյ եւեթ ճամարձակիցիմ վստահութեամբ, կամ համարիցիմ յանդգների վերայ ոմանց որ կարծեն զմէնջ եթէ ըստ մարմնոյ գնայցեմք» (Ք. Կորնթ., Ժ, 2), «... Ապա խնդրեաց Շաղիտայ յԱստուծոյ, զի մի՛ ոք ըմբռնեացէ զմարմին նորա» (Բուղ., ՊԶ, 5-րդ, ԻԶ, 186)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, մի՛ արգելական մակ-բայը և նախադասության մեջ եղած բայը կարող են ընդմիջվել այլ բառերով և հեռանալ իրարից։ Այդ կառուցվածքը չափազանց տա-րածված է 5-րդ դարի մեր ընտիր մատենագիրների երկերում։

Մինչև այստեղ շարադրվածից պարզորոշ կերպով երևում է, որ քննարկվող կարգի նախադասությունները իրենց արտաքին տեսքով միանգամայն նման են նպատակի պարագա երկրորդական նախա-դասություններին։ Դա հետևանք է այն բանի, որ այդ նախադա-սությունները սովորաբար ունենում են նպատակի սուբյեկտիվ երանգ։ Հենց այդ ցանկության և նպատակի սուբյեկտիվ մոմենտն է, որ այդպիսի նախադասությունները կառուցվածքային տեսակե-տից մոտեցնում է նպատակի պարագա երկրորդական նախադա-սություններին՝ օրինակ՝

«Եւ սուրբն Ներսէս զբազուկսն հանապազատարածս համբար-ձեալ յերկինս, խնդրէր ի տեառնէ՝ զի ամխայնացէ տէր ի յուխտ իւր և ի սուրբ եկեղեցիս իւր (Բուղ., ՊԶ, 5, Դ, 163), «Զհազար ամ յաշտ արար (Զրուան)՝ զի թերևս որդի մի լիցիցի նմա» (Եզն., ԵԱ, 2, Ա, 79)։

Վկայված ստորադասական նախադասությունների երկրորդա-կան մասերը իրենց արտաքին տեսքով միանգամայն նման են միմյանց։ Երկուսն էլ գլխավոր մասի հետ միացել են զի շաղկապով և ունեն ստորադասական եղանակով արտահայտված ստորոգյալ-ներ, շնայած ըստ բնույթի նրանցից առաջինը ուղիղ խնդիր երկ-րորդական նախադասություն է և հանդիսանում է խնդրել բայ-ստո-րոգյալի անմիջական օբյեկտը, իսկ երկրորդը՝ նպատակի պարագա երկրորդական նախադասություն։

Քննարկվող տիպի խնդիր երկրորդական նախադասությունների կառուցվածքային նմանությունը նպատակի պարագա երկրորդա-կան նախադասություններին միայն դասական հայերենին յուրա-հատուկ բացառիկ մի երևույթ չէ։ Հին ռուսերենում արդեն 16—17 դարերի հիշատակարաններում կամական բայով արտահայտված

ստորոգյալին անմիջականորեն որպես օբյեկտ վերաբերող երկրորդական նախադասությունները գլխավորին ստորադասվում են **чтобы (чтоб)** շաղկապի միջոցով, իսկ երկրորդական նախադասության բայ-ստորոգյալը արտահայտված է լինում անցյալ ժամանակով, որը **чтобы (чтоб)** շաղկապի կողքին կազմում է դասական հայերենի ստորադասական եղանակին մոտ մի եղանակ *сослагательное наклонение*:

օրինակ՝

«Смирной же просил, чтоб того вора ему показали».

«Дети боярские говорили ему, чтоб князь поехал в Димитров»¹.

Այս կարգի երկրորդական նախադասությունների կառուցվածքը հետագայում ամբողջովին անցավ ժամանակակից ռուսերենին, որը կամք ու ցանկություն նշանակող բայերի ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները նույնպես գլխավոր մասին ստորադասում է **чтобы (чтоб)** շաղկապով և երկրորդական նախադասության ստորոգյալը դնում է նույն եղանակով և ժամանակով, ինչ հին ռուսերենը. օրինակ՝

«Я непременно почему то хотел, чтоб он начал первым».

Ф. М. Достоевский, Идиот, М. 1955, 449.

Նպատակի պարագա և կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասությունները կառուցվածքային ակնհայտ նմանություններ ունեն նաև այլ լեզուներում²:

Սակայն որքան էլ հետազոտության առարկա հանդիսացող նախադասությունները կառուցվածքային ընդհանրություններ ունենան նպատակի պարագա երկրորդական նախադասությունների հետ, նրանք ունեն ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններին յուրահատուկ էական հատկանիշները և երկրորդական նախադասությունների բնույթը որոշող սպեցիֆիկ առանձնահատկություններով միանգամայն տարբերվում են նպատակի պարագա երկրորդական նախադասություններից:

¹ Т. П. Ломтев, Очерки по историческому синтаксису русского языка, 1956, стр. 548.

- Հատկենենում և՛ նպատակի պարագա և՛ կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասությունները գլխավորին ստորադասվում են *ut* շաղկապի միջոցով (*ut objectivum, ut finale*), իսկ նրանց ստորոգյալները արտահայտված են լինում *modus conjunctivus*-ով:

Պարսկերենում երկու դեպքում էլ ստորադասումը տեղի է ունենում սովորաբար (և շաղկապի միջոցով, երկու դեպքում էլ երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է բայի ըզձական եղանակով:

ա) Քննարկվող տիպի երկրորդական նախադասությունները լրացնելով գլխավոր նախադասության կամք և ցանկություն արտահայտող ստորոգյալին՝ ցույց են տալիս, թե ի՞նչն է հատկապես հանդիսանում կամահայտության կամ ցանկության օբյեկտը:

Այդ նախադասությունները լրացուցիչ նշանակությամբ դրսևորելով նպատակի երանգ՝ իրենց հիմնական և առաջնային նշանակությամբ մնում են խնդիր երկրորդական նախադասությունների: Այս հանգամանքն ի նկատի ունենալով Ս. Ի. Սորոլեակին այդ կարգի նախադասությունները անվանում է նպատակաօբյեկտային (финально-объективные предложения):

բ) Կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասությունները դրվում են ոչ թե բայիմաստի թեկադրությամբ, ինչպես նպատակի պարագա երկրորդական նախադասությունները, այլ բայի սեռի թեկադրությամբ, իսկ բայիմաստը այդ նախադասություններին հաղորդում է միայն նպատակի լրացուցիչ երանգ: Նրանց գոյությունը հնարավոր է միայն ներգործական սեռի բայերի մոտ, մինչդեռ նպատակի պարագա երկրորդական նախադասությունների կիրառության ոլորտը այդ տեսակետից անսահմանափակ է: Նրանք կարող են լրացնել գլխավոր նախադասությանը՝ անկախ նրա բայ-ստորոգյալի սեռից:

գ) Կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասությունների գոյությունը հնարավոր է գլխավոր նախադասության ոչ բոլոր ներգործական սեռի խնդրառու բայերի մոտ, այլ նրանցից միայն կամական բայերի դեպքում:

դ) Կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասությունները կապվում են գլխավոր նախադասության ներգործական սեռի բայով արտահայտված ստորոգյալի հետ՝ հանդիսանալով նրա անմիջական օբյեկտը, մինչդեռ նպատակի պարագա երկրորդական նախադասությունները վերաբերում են գլխավոր նախադասությանը ամբողջությամբ վերցրած: Նպատակի պարագա երկրորդական նախադասությունները ցույց են տալիս ոչ թե միայն գլխավոր նախադասության ստորոգյալով արտահայտված գործողության նպատակը, այլ ենթակայի ու գործողության, իսկ եթե գլխավոր նախադասության ստորոգյալը ներգործական սեռի բայ է, գործողության ու կրող խնդրի փոխհարաբերության նպատակը:

ե) Նպատակի պարագա երկրորդական նախադասությունները չեն կարող փոխարինվել այնպիսի շարահյուսական հոմանիշներով, որպիսիներով փոխարինվում են կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասությունները: Եթե նպատակի պարագա

կամքի ու ցանկութեան օբյեկտ երկրորդական նախադասութիւնները իրենց կառուցվածքի տեսակետից հիմնականում համընկնում են իրար, ապա իրենց շարահյուսական հոմանիշների կառուցվածքի տեսակետից նրանք ներկայացնում են խիստ էական տարբերութիւններ: Կամքի ու ցանկութեան օբյեկտ երկրորդական նախադասութիւնները կարող են փոխարինվել այնպիսի շարահյուսական հոմանիշներով, որոնք, հանդիսանալով ծավալուն դերբայական դարձված, ունեն տրական կամ հայցական հոլովներով ենթակա անորոշ դերբայի մոտ. օրինակ՝

«... Ոչ կամիմք քազաւորել լմա ի վերայ մեր» (Ղուկ., ԺԹ, 14): «... Զթշնամիսն իմ զայնոսիկ որ ոչն կամէին զիս քազաւորել ի վերայ նոցա, ածէք այսր և սպանէք առաջի իմ» (Ղուկ., ԺԹ, 27):

Վկայված երկու օրինակներում էլ ստորոգյալների՝ ծավալուն դերբայական դարձվածներով արտահայտված լրացումները հանդիսանում են կամքի ու ցանկութեան օբյեկտ երկրորդական նախադասութիւնների շարահյուսական հոմանիշներ: Առաջին օրինակում տրված է տրական հոլովով ենթակա (լմա) անորոշ դերբայի (թազաւորել) մոտ՝ կախված կամիմ բայից¹: Երկրորդ օրինակում տարբերութիւնը կայանում է նրանում, որ անորոշ դերբայի ենթակայան (ղիս) դրված է ոչ թե տրական, այլ հայցական հոլովով²: Հիշյալ երկու նախադասութիւնները հեշտութեամբ կարող են վերածվել ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւններ ունեցող բարդ ստորադասական նախադասութիւնների.

1. Ոչ կամիմք, զի դա թազաւորեսցէ ի վերայ մեր: 2. Զթշնամիսն իմ զայնոսիկ, որ ոչն կամէին, զի ես թազաւորէի³ ի վերայ նոցա, ածէք այսր և սպանէք առաջի իմ:

Ինչպես պարզ երևում է, սրանք հենց նույն կամքի ու ցանկութեան օբյեկտ երկրորդական նախադասութիւններն են:

Համեմատիր նաև հետևյալ նախադասութիւնները.

«... Կամիմ զձեզ անհոգս լինել» (Ա. Կորնթ., է, 32): «... Կամիմ զձեզ իմաստունս լինել ի բարիս, և անմեղս՝ ի շարիս» (Հռովմ., ԺԶ, 19):

Դասական հայերենում լինում են դեպքեր, երբ միևնույն նախադասութիւնը վկայված է լինում նշված երկու ձևով էլ. մի դեպքում՝ գլխավոր և երկրորդական մասերից կազմված բարդ ստորադասա-

¹ Dativus cum infinitivo.

² Accusativus cum infinitivo.

³ Քանի որ հին հայերենը ստորադասական եղանակի անցյալի ապառնու հատուկ ձև չուներ, ուստի գործածել ենք սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակը:

կան նախադասութեամբ, իսկ մյուս դեպքում՝ կրճատված ձևով, երբ երկրորդական նախադասութեան ստորոգյալը վերածվել է անորոշ դերբայի, իսկ նրա ենթական դրվել է տրական կամ հայցական հոլովով. օրինակ՝

«Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք, եղբարք» (Հռովմ., Ա, 13): «Քան-
զի ոչ կամիմ տգէտ լինել ձեզ, եղբարք» (Բ. Կորնթ., Ա, 8): Նշա-
նակում է՝ դասական հայերենում ամեն մի ցանկութեան օբյեկտ
երկրորդական նախադասութեան կարող է վերածվել իր այնպիսի
շարահյուսական հոմանիշների, որոնց մասին խոսվեց վերը, իսկ
նպատակի պարագա երկրորդական նախադասութեանները այդպի-
սի կառուցվածքով շարահյուսական հոմանիշներ չունեն:

Լատիններենում ևս քննարկվող երկրորդական նախադասու-
թյունների շարահյուսական հոմանիշ է հանդիսանում անորոշ դեր-
բայի մոտ հայցական հոլովով ենթակայի կոնստրուկցիան՝ կախ-
ված կամք ու ցանկություն նշանակող բայերից (կամական բայեր):
Սրանք այնպիսի կառուցվածքի նախադասութեաններ են, որոնցով
չեն կարող փոխարինվել լատինների նպատակի պարագա երկրոր-
դական նախադասութեանները: Բնորոշ է նաև այն հանգամանքը,
որ նպատակի պարագա երկրորդական նախադասութեաններն իրենց
հերթին կարող են փոխարինվել այնպիսի շարահյուսական հոմա-
նիշներով, որոնք կառուցվածքային էական տարբերութեաններ ու-
նեն խնդիր երկրորդական նախադասութեանների շարահյուսական
հոմանիշներից:

Այսպիսով, չնայած նպատակի պարագա երկրորդական նա-
խադասութեանների հետ ունեցած իրենց կառուցվածքային ընդ-
հանրութեաններին, անմիջականորեն գլխավոր նախադասութեան՝
կամական բայերով արտահայտված ստորոգյալներին վերաբերող
երկրորդական նախադասութեանները իրենց էական հատկանիշ-
ներով հանդիսանում են ուղիղ խնդիր երկրորդական նախադասու-
թյուններ և արտահայտում են գլխավոր նախադասութեան ենթա-
կայի կամքի ու ցանկության օբյեկտը:

Ստորև տալիս ենք կամքի ու ցանկութեան օբյեկտ երկրորդա-
կան նախադասութեանների օրինակներ ըստ նրանց խնդրառու-
գրաբարում առավել շատ գործածական կամական բայերի.

Ազաչեմ. «Ժբրև լուաւ (հարիւրապետն) զՅիսուսէ, առաքեաց ղժերսն
ի Հրէից, ազաչել զնա զի եկեսցէ ապրեցուցէ զժառայն
նորա» (Ղուկ., է, 3): «Արդ՝ թէ ի ձէնչ ես ուղղութիւն ինչ
տեսանէի՝ առ աստուածոթիւնն պաշտամամք մերձենալ՝
ոչ դադարէի զցառգ և զցերեկ ազաչել վասն ձեր, զի մի՛

կորիցէք» (Ագաթ., ԻԱ, պար. 235): «Եւ աղաչեաց զվերա-
կացուս իւրոյ մահուանն, զի թողացուցեն նմա սակաւ
մի կալ յաղօթս» (Բուլ., 4-րդ, ԾԶ, էջ 148):

«Աղաչեւ զնա ոմն ի փարիսեցւոցն զի կերիցէ ճաշ ընդ նմա»
(Ղուկ., է, 36):

Խնդրեմ. «Եւ աղօթս առնելով խնդրեցեն յԱստուծոյ զի գերէդարձ
լիցի մեզ անդրէն ի հայրենի երկիրն մեր» (Եղիշէ, 189):
«Իսկ սուրբն Շաղիտայ իմացեալ զայս՝ թէ սպասեն առ-
նով զմարմինն նորա բաղում մարդիկ, ապա խնդրեաց
Շաղիտայ յԱստուծոյ, զի մի՛ ոք ըրունեացէ զմարմին
նորա» (Բուլ., 5-րդ, ԻԶ, էջ 186): «Խնդրեա յԱստուծոյ
զի ստէպ եկեացեն զհետ սուրբ կարապետիդ» (Եղիշէ,
էջ 196):

Կամիմ. «Կարող էր (Աստուած) ևս վաղ յառաջին յաւիտեանսն առ-
նել զաշխարհ. այլ այնպէս կամեցաւ՝ զի ոչ կարի վաղ
առնիցէ, և ոչ յոյժ անագան, այլ յորժամ դէպ և պատ-
շաճ իցէ» (Եզն., ԵԱ, 3-րդ, ԺԶ, 162): «Կամիմ զի արք
կայցեն յաղօթս յամենայն տեղիս, բառնայցեն զսուրբ
ձեռս ի վեր առանց բարկութեան և երկմտութեան»
(Ա. Տիմոթէոս, Բ, 8): «Կամիմ զի դիտիցէք դուք որպիսի
ճգնութիւն ունիմ յանձին վասն ձեր և վասն Հաւողիկեց-
ւոցն, և ուրոց շիցէ տեսեալ զերեսս իմ մարմնով» (Կողոս.,
Բ, 1): «Դարձեալ պատասխանի ետ Պիղատոս և ասէ ցնո-
սա. իսկ զի՛նչ կամիմ թէ արարից զարքայն հրէից»
(Մարկ., ԺԵ, 12): «Եւ անօթս կազմեալս ի կորուստ ին-
քեանք զանձինս արարին, և ոչ Աստուած, զորմէ ասէն
Առաքեալ՝ եթէ կամի, զի ամենայն մարդիկ կեցցեն, և ի
գիտութիւն ճշմարտութեան եկեացեն» (Եզն., ԵԱ, 2-րդ,
ԺԷ, 116): «...Կամիմ, զի կացցէ դա մինչև ես գամ»
(Յովհ., ԻԱ, 22): «...Կամի՛ս զի երթիցուք քաղեսցուք
զախ (զորոմնն) ի բաց» (Մատթ., ԺԳ, 28):

Հրամայեմ. «Եւ հարիւրապետն քանզի կամեցաւ ապրեցուցանել
զՊաւլոս՝ արգել զնոսա ի խորհրդոյն, հրամայեաց զի որ
կարողն իցեն լուղել՝ անկանիցին նախ և ի ցամաքն ելա-
նիցեն» (Գործ., ԻԷ, 43): «Եւ ես հրամայեցի զի (տուն
տեառն) ամենևին բովանդակ շինեսցի» Ա. ԵԶԲ., Զ, 28):
«Եւ ի հարկաց կողմանցդ ասորւոց և փինիկեցւոց պա-
տուիրանաւ հրամայեցի զի տացեն արանցդ աղքատիկ ի
նպաստաւորութիւն զորից տեառն» (Ա. Եզր., Զ. 29):

«Հրամայեաց համբարակապետին, որում անունն էր Դենշապուհ, զի յառաջ քան զնա երթիցէ ի քաղաքն, ուր էին սուրբ քահանայքն Տեառն, և շարաշար տանջանօք իշխեսցէ դատել և հարցանել, և սրով վախճանել» (Նղիշէ, 143, տող 10—11)։ «Իսկ նա (Գրիգորիոս) անդէն հրամայեաց, զի արկցեն զանձամբք իւրեանց հանդերձս և ծածկեսցեն զամօթ իւրեանց» (Ագաթ., Ի, պար. 221)։

Վերջին բայը հանդիպում է նաև հարադիր կազմությամբ հրաման տալ. օրինակ՝ «Ետ հրաման (Թագաւորն) վասն երկուցն որ անդէն ի վարաւանին առ իւրն էին, Սամուէլ և Աբրահամ, զի գաղտ կարուսցեն զնոսա» (Նղիշէ, 196)։ «Հրաման ետ Գրիգոր զօրականին և իշխանացն, որ ընդ իւրն էին, զի ելցեն և մրձօք տապալեացեն զշինուածս բազնացն» (Ագաթ. ՃԺԵ, պար. 812)։ «Եւ եղև իբրև ընթերցան զթուղթն հրամանաց հրովարտակին այնորիկ՝ հրաման տայր Թագաւորն մեծաւ սաստկութեամբ պատուիրանաւ, զի զամենայն տեղիս իշխանութեան իւրոյ քննայոյզ խուզիւ փութով խնդրեսցեն» (Ագաթ., ՊԶ, ԺԵ, պար. 157)։

Յորդաբել, ստիպել. «Այլ որպէս ցուցաք բազում անգամ զամբարշտին շարութիւն, յորդորէր և ստիպէր զզօրսն Պարսից ի մօտաւոր կողմանց աշխարհին, զի հրամանաւ արքունի զօր եկեսցէ յօգնականութիւն նոցա» Նղիշէ, 125)։

Յանձն առնել. «Գրեաց և յանձն արար (Հարեշղում Շապուհ) մեծ սպարապետին, զի ընդ զօրս արքունի երթիցեն ի գործ պատերազմի» (Նղիշէ, 196)։

Վերջին օրինակում հատկանշական է այն հանգամանքը, որ ուղիղ խնդիր երկրորդական նախադասության խնդրառուի դերով հանդես են եկել երկու բայեր (գրել, յանձն առնել), որոնցից առաջինը (գրել) հիմնականում շմտնելով կամական բայերի խմբի մեջ՝ այդ նախադասության մեջ ստացել է գրավոր կարգադրութիւն անելու նշանակութիւն և դարձել է կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասության խնդրառու բայ, նույնպիսի իմաստ է արտահայտում գրել բայը նաև հետևյալ նախադասության մեջ.

«Եւ արդ այսուհետև տերութիւնդ քո գիտէր որ ինչ արժան է հրամայել ի վերայ ժողովրդեանն Հրէից, որք զայն գործեցին, և գրել ընդ ամենայն տիեզերս, զի երկրպագեսցեն Քրիստոսի՝ իբրև ճշմարիտ Աստուծոյ» (Խոր., ՊԶ, 2-րդ, լճ, 153)։

Նույն ձևով կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասության խնդրառու բայ կարող է դառնալ ասել բայը, որը հիմնականում ասացական բայ է և իր սովորական իմաստով կարող է դառնալ խոսքի օբյեկտ (ուրիշի անուղղակի խոսք) երկրոր-

դական նախադասության խնդրառու բայ: Կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասության խնդրառու բայ դառնալիս ասել—ը ասացական բայի իր սովորական իմաստին ղուգահեռ ստանում է նաև նոր իմաստ՝ խնդրելու, կարգադրելու, հորդորելու նշանակություն. օրինակ՝ «... Երթաք, ասացէք եղբարցն իմոց զի երթիցեն ի Դալիւեայ և անդ տեսցեն զիս (Մատթ., ԻԸ, 10):

Քերված օրինակը բնորոշ է այն տեսակետից, որ ասել բայը չի կորցրել ասացական բայի իր հիմնական նշանակությունը, բանի որ դիտարկելով նախադասության մեջ հանդես է եկել որպես խոսքի օբյեկտ երկրորդական նախադասության խնդրառու բայ-ստորոգյալ: Սակայն այդ խոսքի օբյեկտ երկրորդական նախադասությունը (ուրիշի անուղղակի խոսք) արտահայտելով մի գործողություն, որի կատարվելը ապառնի ժամանակակետում ցանկալի է գլխավոր նախադասության ենթակայի համար, ևսացել է կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասության կառուցվածք: Այդ պատճառով էլ նրա խնդրառու ասել բայը ունի խնդրելու, կարգադրելու նշանակություն:

Այս նույն երևույթը նկատելի է նաև ժամանակակից հայերենում:

Համեմատիր հետևյալ նախադասությունները.

«Ով էր ասում նրան, որ ինձ նման մի թուլամորթ արարած ծնի» (Նար-Դոս, հ. 3, 1955, 626—627), «—Ասա Կարեն զորապետին, որ մի քանի գունդ քաջ աղեղնավորներով և սպարակիր տիգավորներով զնա այդ կողմը» ((Րաֆֆի, հատ. 7, 537), «— Գնա, սիրելի զավակս, ասա, որ քաղաքապետին իմ մոտ կանչեն» (Րաֆֆի, հատ. 7, 314):

Քերված օրինակներից առաջինում երկրորդական նախադասության համար որպես խնդրառու ծառայող ասել բայը արտահայտում է ցանկության զաղափար, հոմանիշ է խնդրել բային (ով էր խնդրում), իսկ երկրորդ և երրորդ օրինակներում կարգադրելու իմաստ: Այդ պատճառով էլ այդ երկրորդական նախադասությունները հանգես են եկել կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասություններին բնորոշ կառուցվածքով:

Որպես կամահայտություն դրսևորող բայ հին հայերենում կարող է հանդես գալ տալ բայը, որը տվյալ գործածությամբ նշանակում է քույր տալ և դառնում է խնդրառու բայ կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասությունների համար. օրինակ՝

«Եւ տո՛ւր մեզ, զի արբցուք զբաժակ նահատակության, զի առ-

ցուք զփոխարէն պսակն յաւուր արդար դատաւտանին ի յայտնութեան փառաց քոց» (Ագաթ., ՊԶ, ԺԳ, պար. 148): «Այլ որ առախանասդ ամենեցուն՝ աս'աւ մեզ զի լիցուք վկայք աստուածութեանդ քոյ, շարշարել վասն անուան քոյ, և մեռանել վասն ճշմարտության քոյ, և նորոգել միա անգամ ի գալստեան քոյ» (Ագաթ., ՊԶ, է, պար. 96):

* * *

Այսպիսով, հին հայերենում կիրառության ընդարձակ ոլորտուն են այն երկրորդական նախադասութիւնները, որոնք կառուցվածքային առանձնահատկութիւններով նման լինելով նպատակի պարագա երկրորդական նախադասութիւններին, հիմնականում ուղիւ խնդիր երկրորդական նախադասութիւններ են, քանի որ նրանք դրվում են գլխավոր նախադասության խնդրառու բայի սեռի պահանջով և հնարավոր են միայն ներգործական սեռի որոշ բայերի (կամական բայեր) մոտ, իսկ բայիմաստը այդ նախադասութիւններին հաղորդում է իմաստային որոշ երանգ (կամք, նպատակ ու ցանկութիւն): Այդ տիպի նախադասութիւնները անմիջականորեն կապվելով գլխավոր նախադասության ստորոգյալի հետ որպէս նրա օբյեկտը, իրենց բովանդակությամբ միշտ դրսևորում են կամք, ցանկութիւն և նպատակ, մի հանգամանք, որը որոշակիորեն իր դրոշմն է դնում նրանց կառուցվածքի վրա: Ուստի այդպիսի նախադասութիւնները կարելի է անվանել կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասութիւններ:

Р. К. ОГАНЕСЯН

СТРУКТУРА ПРИДАТОЧНЫХ ПРЕДЛОЖЕНИИ ОБЪЕКТА ВОЛЕИЗЪЯВЛЕНИЯ И ЖЕЛАНИЯ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Р е з ю м е

Некоторые структурные различия между объектными придаточными предложениями часто бывают обусловлены значением управляющего глагола главного предложения. В зависимости от значения управляющего глагола главного

предложения различаем объектные предложения речи, мышления, восприятия, волеизъявления и т. д. От объектных предложений других типов особенно отличаются своей структурой придаточные предложения объекта волеизъявления.

В древнеармянском языке в роли управляющего глагола для изучаемых придаточных предложений в главном выступают глаголы, обозначающие волю и желание. Эти предложения в древнеармянском языке входят в ряд придаточных предложений с союзами и своими существенными признаками отличаются от придаточных предложений с относительными словами.

Придаточные предложения объекта волеизъявления и желания в древнеармянском языке соединяются с главным посредством союза զի. Сказуемые этих предложений выражаются глаголом I или II будущего времени. Этими чертами структуры изучаемые предложения схожи с придаточными предложениями обстоятельства цели, однако своими существенными признаками они объектные предложения; так как всегда управляются переходным глаголом главного предложения. Но то обстоятельство, что они выражают волю, желание и цель, определенно отражается на их структуре и приближает их к придаточным предложениям обстоятельства цели.